

ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ

Պրոֆ. Գ.Գ. Հարությունյան - Զեկույց
«Սահմանադրական մշակույթ» միջազգային
վերլուծական կենտրոնի կողմից կազմակերպված
միջազգային խորհրդածոդովում, Հոուն, 17.11.2017թ.

Միջազգային խորհրդածոդովի հարգարժան մասնակիցներ,

Ուղիղ քառասուն տարի առաջ՝ Բելգրադում դոկտորանտուրա անցնելու տարիներին, ինձ բախտ վիճակվեց դիտել Անտոնիո Կլիմատիի եւ Մարիո Մորրայի 1975 թվականին նկարահանած «Սավանայի վերջին ճիչը» ֆիլմը: Գեղարվեստական այդ ֆիլմի սյուժեն գերազանցապես կառուցված էր վավերագրական կադրերի վրա: Մի կողմից, կենդանական աշխարհն էր՝ իր «վայրի» ու բնական դրսեւորումներով, մյուս կողմից մարդն էր՝ իր բազում ու անբնական վայրագություններով: Ֆիլմից բոլորը գլխիկոր էին դուրս գալիս՝ ամաչում էին մարդ լինելու համար:

Մեր ժամանակներում մարդկային վայրագություններն ավելի սահմոկեցուցիչ բնույթ են ստացել: Ես հոգեւոր ցնցում ապրեցի, երբ հեռուստատեսկրանից տեղեկացա, որ մայրն իր երեխային քաշով վաճառում է՝ զին սահմանելով յուրաքանչյուր կիլոգրամի համար:

Նույն հեռուստատեսկրաններից ամեն ժամ արյան գետեր են հոսում, միլիարդավոր կրակոցներ են հնչում, դաժանությունները դարձել են մեր առօրյայի անբաժան մասը: Ցավալին այն է, որ այդ ամենի հետ հաշտվել ենք, դրանք դառնում են սպասված ու, որքան էլ տարօրինակ հնչի՝ ցանկալի: Հաշտվել ենք նաեւ այն իրողությունների հետ, որ դրանցով ու այդ միջավայրում են դաստիարակվում մեր երեխաները: Նրանց ձգտումն է դառնում այդ ամենը բազմապատկելն ու դրանց գունային նոր երանգներ հաղորդելը:

Մարդկային չարությունը համամարդկային աղետալի չափերի է հասնում: Այն վերաճել է միջազգային ահաբեկչության, միլիոնավոր մարդկանց արտագաղթի, տասնյակ միլիոնավոր մարդիկ են մատնված սովահարության:

Ցավալի փաստն այն է, որ չարը մարդու եւ մարդկային հասարակության մեջ շատ խոր արմատներ է ձգում, իսկ դրան դիմակայելու՝ մարդկության քայլերն ստեղծված իրավիճակին համարժեք չեն:

Տեղին է կրկին վերհիշել Աստվածաշնչի Ծննդոց գրքի 6-րդ բաժնում զետեղված հայտնի խոսքերը. «Երբ Տեր Աստված տեսավ, որ մարդկանց չարագործությունները բազմանում են երկրի վրա, եւ ամեն ոք իր մտքում ամեն օր խնամքով չարություններ է նյութում, զոջաց Աստված, որ մարդ է ստեղծել երկրի վրա, եւ տրտմեց իր հոգու խորքում: Տեր Աստված ասաց. երկրի երեսից վերացնելու եմ իմ ստեղծած ամեն մի էակ..., որովհետեւ զոջացել եմ, որ ստեղծել եմ նրանց»:

Հուսանք, որ վիճակը դեռեւս հերթական Մեծ ջրհեղեղին չի հասել, եւ մարդկությունը ներկա կացությունից խելամիտ ելք պետք է գտնի:

Չեմ կարծում, որ պետք է հույսը դնել հրաշքների վրա:

1166 թվականին՝ հայ իրականության մեջ ստեղծված ծանրագույն պայմաններում, Ներսես Շնորհալին օժվում է Հայոց Կաթողիկոս: Նա առաջին հերթին պարտավորվածություն էր զգում իր հոտին դուրս բերել ստեղծված աղետալի վիճակից: Եվ դա արեց իր խոսքն ուղղելով մարդուն՝ իշխանավորին, հոգեւորականին, զինվորականին, հասարակ գյուղացուն, կնոջն ու տղամարդուն՝ ասելով, թե **մարդիկ դուք ինչպիսին պետք է լինեք, որպեսզի մեր կյանքն այսպիսին չլինի:**

Շնորհալու այդ կոնդակը, որը հետագայում հիշատակվեց որպես թուղթ ընդհանրական /բոլորին ուղղված գրավոր խոսք/, մեծ խորհուրդ է պարունակում: **Մարդու հավաքական վարքագիծն է ստեղծում այն միջավայրը, որում նա ապրում է:** Այսօր խաթարված են այդ վարքագծի արժեքանական հիմքերը: Եթե ավելի քան 200 տարի առաջ մարդկությունն իր հասարակական գոյի կայուն զարգացումը երաշ-

խավորելու համար ապավինեց սահմանադրությունների ընդունմանը, ապա այսօր շատ երկրներում սահմանադրությունների հիմքում դրված արժեքանության եւ իրական կյանքի միջեւ մեծ անջրպետ է գոյանում:

Համոզված ենք, որ ներկա կացության նեգատիվ դրսեւորումները մեծապես պայմանավորված են հենց սահմանադրականության դեֆիցիտով, ինչը գնալով խորացման միտումներ է դրսեւորում: Կարծում ենք, որ դրա հաղթահարման հարցում էական դերակատարություն կարող են ունենալ ժամանակակից անհատի սոցիալական եւ իրավական վարքագծի սահմանադրականացումն ու դրա համար անհրաժեշտ հանրային միջավայրի երաշխավորումը: Վերջինս հնարավոր է միայն յուրաքանչյուր երկրում սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման եւ իրավունքի գերակայության երաշխավորման ճանապարհով:

Հայեցակարգային նման մոտեցումը պահանջում է.

ա/ իրավիճակի բազմագործոն վերլուծություն եւ գիտական ախտորոշում,

բ/ սահմանադրականության երաշխավորման համակարգային նոր մոտեցման առաջադրում:

Այս հարցում մեր մոտեցումները մասնակիորեն կներկայացնենք նաեւ վաղը՝ կլոր սեղանի շրջանակներում:

Վերլուծելով իրավական, ժողովրդավարական պետության կայացմանը, իրավունքի գերակայության հաստատմանը խոչընդոտող պատճառները՝ հանգում ենք այն հետեւությանը, որ եռամիասնության մեջ պետք է դիտարկել հանրային կյանքի բացասական դրսեւորումների, սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման ու կայուն զարգացման խնդիրների լուծումը:

Գտնում ենք, որ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի.

ա/ յուրաքանչյուր երկրում անձի սոցիալական ու իրավական վարքագծի հիմքում ընկած լինի իրավունքի գերակայությունը,

բ/ պետության քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի հիմքում ընկած լինի իրավունքի գերակայությունը,

գ/ հանրային իշխանությունների հանրային վարքագծի հիմքում ընկած լինի իրավունքի գերակայությունը:

Վերջինիս հասնելու համար ժամանակակից հասարակությունները դեռևս չեն ստեղծել անհրաժեշտ իրավական ու կառուցակարգային երաշխիքներ: **Մարդկային հանրությունն այսօր չունի անհրաժեշտ ու գործուն իմունային համակարգ՝ դիմակայելու համար ներկա սոցիալական մարտահրավերներին:** Հանրային կյանքի իմունային անբավարարությունը դարձել է հիմնական սոցիալական աղետների պատճառը: **Դա կարող է հաղթահարվել վերոնշյալ եռամիասնության հենքի վրա հանրային կյանքի սահմանադրականացման ու համարժեք սահմանադրական մշտադիտարկման համակարգի ներդրման ճանապարհով, ինչը, մեր կարծիքով, սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման ու կայուն զարգացման կարևոր երաշխիք կարող է դառնալ:**

Այս հարցերի առնչությամբ դոկտրինալ իմ մոտեցումները ներկայացված են 2016 եւ 2017 թվականներին հրատարակված «Սահմանադրական մշտադիտարկում» ու «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները» մենագրություններում, ինչպես նաեւ մի շարք հոդվածներում ու միջազգային գիտաժողովներում ներկայացված զեկույցներում:

Ավելի քան համոզված եմ, որ հանրային կյանքի սահմանադրականացումը եւ սահմանադրականության դեֆիցիտի շարունակական հաղթահարումը նոր հնարավորություններ կստեղծեն մարդու ստեղծարար ներուժի արդյունավետ դրսեւորման, փոխհասկացողության, հանդուրժողականության եւ փոխադարձ սիրո մթնոլորտ ձեւավորելու, առկա նեգատիվ զարգացումները հաղթահարելու համար:

Սակայն դրա համար պահանջվում է նաև ժամանակակից սահմանադրությունների արժեքանական համակարգում հոգևոր արժեքների դերի հետագա ամրապնդում:

Տարիներ առաջ /2002 թվականին/ մեր դատարանի արժանահիշատակ դատավոր Ռաֆայել Պապայանը հրատարակեց մի կարեւոր մենագրություն՝ «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները» վերտառությամբ: Ես պատիվ ունեցա լինել այդ գրքի գիտական խմբագիրը: Խմբագրի կողմից ներկայացված նախաբանում արտահայտեցի հետևյալ միտքը. «...ինչպես էլ զարգանա իրավական միտքը, իրավունքի ակունքները մնում են անսասան, քանի որ հաստատված են աշխարհի արարման պահից, սերվում են այն հիմքերից, որոնք հայտնվեցին մարդկությանը նրա ծննդյան պահին ու ձեւավորման արշալույսին եւ ներկայացված են Աստվածաշնչում»:

Ուսումնասիրելով աստվածաշնչյան ողջ նյութը՝ ներառյալ Հին ու Նոր Կտակարանները, Սուրբ Մատյանի «օրենսդրական», պատմական, խրատական եւ մարգարեական գրքերը, դիտարկելով սուրբ պատգամների խորհուրդը՝ Կենաց գրքից մինչև Հովհաննու Հայտնությունը, հիշյալ մենագրության հեղինակի հիմնական հետևությունն այն էր, որ մարդուն առնչվող, նրա սոցիալական կեցությունը պայմանավորող յուրաքանչյուր հարցի առաջին հերթին պետք է մոտենալ դրանք տեղափոխելով քրիստոնեական չափորոշիչների տարածք: Այդ ճանապարհով է, որ իրավունքը ոգի է ստանում, Սահմանադրությունը դառնում է արժեքանական երեւոյթ, երբ նրա առանցքում մարդն է՝ իր աստվածակերպությամբ, արարման ոգով ու բնական իրավունքներով եւ ազատություններով:

Ժամանակակից սահմանադրությունները կարող են այդպիսին համարվել, եթե դրանց կենտրոնում մարդն է, իսկ հիմքում՝ իրավունքի գերակայության սկզբունքը, երաշխավորված ու ապահովված է մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների անմիջական գործողությունը, սահմանադրական մակարդակում ու Սահմանադրության միջոցով կյանքի իրավունք են ստացել իրավական, սոցիալական,

ժողովրդավարական պետության հիմնարար սկզբունքները, մասնավորապես՝ ժողովրդաիշխանությունը, իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը:

Այս ամենի միջոցով է նաեւ պետությունը հոգեւոր բովանդակություն ստանում՝ առաջնորդվելով մարդկանց անօտարելի, աստվածային իրավունքների երաշխավորը լինելու սահմանադրական պահանջով:

Ժամանակակից սահմանադրությունների հոգեւոր արժեքանական էությունը լավագույնս է բանաձեւված 1837 թվականին Վենետիկում հրատարակված Նոր Հայկազյան բառգրքում, որում սահմանադրությունը բնորոշվում է որպէս «Որոշումն սահմանաց եւ Տեսչություն վերին»:

Ակնհայտ է, որ.

1. Սահմանադրություն կարող է կոչվել այն իրավական ակտը, որը բովանդակում է սահմանային, եզրագծային, իրեն չգերազանցող, առաջնային նշանակության իրավանորմեր:

2. Դրանց հիմքում պետք է լինի «Աստվածային տեսչությունը», այն է՝ Աստվածային անանց արժեքները, որոնք ոչ միայն ամփոփված են Սուրբ գրքում, այլեւ՝ յուրաքանչյուր անհատի հոգեւոր կերտվածքում, նրա վարքագծում, սոցիալական բոլոր դրսեւորումներում, եւ դառնում են հիմնարար սահմանադրական սկզբունքներ:

Նման արժեքների կրող անհատն է դառնում սահմանադրական լուծումների առանցքը, **իսկ սահմանադրական մշակույթը բնորոշվում է որպէս Աստվածային արժեքների կրողը հանդիսացող անհատների իմաստավորված համակեցության մշակույթ:**

Սահմանադրությունը կենսունակ կարող է լինել միայն ու միայն այն դեպքում, երբ մենք ճանաչելով Աստծո սերը մեր հանդէպ՝ մեր սոցիալական հարաբերությունների ու դրանց կարգավորման հիմքում դնում ենք «սիրիր մերձավորիդ» պատվիրանը, երբ սահմանադրաստեղծ ու իրավաստեղծ ողջ գործընթացում կարողանում

ենք տեսնել արարչաստեղծ աշխարհի բնական ու օրգանական կապվածությունն իր Արարչին, որպեզի մարդը հեռանալով Աստծուց՝ չվերածվի իր հակոտնյային:

Երբեք չպետք է մոռանանք, որ երկրի առաջընթացի կարելորագույն գրավականը կայուն հավատ ունեցող, օրինապաշտ, **սահմանադրական ինքնություն կրող քաղաքացին է**: Մեր խորին համոզմամբ, **սահմանադրական ինքնություն ունեցող անհատի քրիստոնեական եւ իրավական աշխարհըմբռնումը ներդաշնակ ամբողջականություն է, որի առանցքը մարդն է՝** իր քաղաքացիական որակներով, հոգեւոր ու բարոյական արժեքներով, ճշմարիտի, արդարի ու մարդկայինի նկատմամբ հազարամյակներով ձեւավորված հավատով, սահմանադրորեն երաշխավորված անօտարելի իրավունքներով: Համոզված եմ նաեւ, որ այն իրավական համակարգը, որի հիմքում դրված չէ մարդու բնական ու անօտարելի իրավունքների ճանաչումը՝ որպես բարձրագույն արժեք, որպես իշխանության սահմանափակիչ պայման, որպես անմիջականորեն գործող իրավունք, կենսունակ լինել չի կարող եւ ուղղակի հակասության մեջ կմտնի աշխարհըմբռնման քրիստոնեական սկզբունքների հետ:

Հարցերի հարցն այն է, թե որքանով է իրական կյանքում, սոցիալական հարաբերություններում միս ու արյուն ստանում Սահմանադրության արժեքանությունը՝ որպես սահմանադրորեն հոգեւոր արժեքների, «Վերին տեսչության» իրացման կարելոր երաշխիք: Դա հնարավոր է երաշխավորել միայն մարդու սոցիալական ու իրավական վարքագծի սահմանադրականացման ճանապարհով, ինչը դառնում է ժամանակակից աշխարհում սահմանադրական ժողովրդավարության հաստատման օրակարգի առանցքային խնդիրը:

Շնորհակալություն: